ՀԵՌԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍ Բ ԳԵՎԱՐԳԵՍԵԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Արևելյան Հնդկաստանի Կաթողիկոս Բասիլիոս Գևարգեսե Բ-ը վախճանվեց այսօր: Հուղարկավորությունը շաբաթ օր:

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՏԻՄՈԹԵՈՍ
Նշանակված Կաթողիկոս

3 հունվարի 1964 թ.
ՔՈՏԱՅԱՄ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՏԻՄՈԹԵՈՍ
ՆՇԱՆԱԿՎԱԾ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱԼԱԲԱՐ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ

ՔՈՏԱՅԱՄ

Խոր վշտով կարդացինք Ձեր հեռագիրը Նորին Սրբություն Բասիլիոս Կաթողիկոսի մահվան մասին: Թող Աստված Մեր հանգուցյալ Եղբոր բարի հոգին խաղաղությամբ ընդունի արդար հոգիներու աշխարհին մեջ:

Թող Աստված անսասան և ծաղկյալ պահե Ձեր Առաքելական Սուրբ Եկեղեցին և համայն Ձեր հավատացյալ ժողովուրդը:

Այսօր, շաբաթ օր, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մեջ Մեր նախագահությամբ հանդիսավոր հոգեհանգիստ կկատարենք:

Վշտակցությամբ և եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4 հունվար 1964
ԷՋՄԻԱԾԻՆ